

## Ընդհանուր դրույթներ

1. UBPay համակարգով դրամական փոխանցումներն իրականացվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում:
2. Տարբեր արժույթային զույգով փոխանցման դեպքում փոխարկման փոխարժեքը սահմանվում է UBPay համակարգի կողմից:
3. Յուրաքանչյուր փոխանցման համար Բանկը հաճախորդին տրամադրում է փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր: Չստացված դրամական փոխանցումների վաղեմության ժամկետը կազմում է 180 օր:
4. Դրամական միջոցների փոխանցման/ստացման կատարման առավելագույն ժամկետը մինչև 10 րոպե է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կամ UBPay համակարգի կողմից իրականացվում է լրացուցիչ ստուգում:
5. Փոխանցման վավերապայմանների փոփոխությունը Բանկի կողմից կատարվում է վավերապայմանների փոփոխման դիմումի և փոխանցողի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Վավերապայմանների փոփոխությունը կատարվում է միայն Ստացողի անվան, ազգանունի կամ հայրանունի/երկրորդ անվան տվյալներում:
6. Դրամական փոխանցման չեղարկում կարող է նախաձեռնվել, եթե Դրամական փոխանցման ուղարկման գործառնության նախաձեռնման պահից չի անցել 180 օր:
7. Փոխանցման չեղարկումը կատարվում է չեղարկման դիմումի և փոխանցողի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման, չեղարկման դիմումի նույն բանկային օրվա ընթացքում, փոխանցված գումարի վերադարձմամբ: Այն դեպքում, երբ Հաճախորդը դիմում է Բանկին փոխանցման չեղարկման համար փոխանցման իրականացումից հետո 24 ժամվա ընթացքում, Բանկը հաճախորդին է վերադարձնում փոխանցման միջնորդավճարը, հակառակ դեպքում միջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:
8. Ստացողի կողմից դրամական փոխանցման գումարը 180 օրում չստանալու դեպքում Ուղարկողը կարող է նախաձեռնել Դրամական փոխանցման վերադարձ:
9. Փոխանցման վերադարձ կատարվում է վերադարձի դիմումի և փոխանցողի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Դրամական փոխանցումների վերադարձի դեպքում միջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:
10. Վավերապայմանների փոփոխությունը, չեղարկումը, հետվերադարձը կատարվում են UBPay համակարգի կողմից սահմանված կարգով:
11. Վավերապայմանների փոփոխությունը, չեղարկումը, հետվերադարձը ենթակա է կատարման միայն չվճարված փոխանցումների դեպքում: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ Internal
12. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված

միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

13. Բանկն իրավունք ունի փոխանցման կատարումը մերժել, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ համագործակցող կազմակերպության ներքին իրավական ակտերին, ՀՀ կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև պատասխանատվություն չի կրում համագործակցող կազմակերպության կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, գումարի հետվերադարձի, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուին տրամադրելու կամ տրամադրման ժամկետների համար:
14. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված սխալ տվյալներով փոխանցման կատարման և/կամ դրա հետևանքով առաջացած վնասների համար: